ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

14 օգոստոսի 2017 թվականի N 101-Ն

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 40-րդ հոդվածի, 41-րդ հոդվածի, 42-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով երկրաբանական ուսումնասիրության ծրագրի 2017 թվականի հուլիսի 21-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» ԲՓ 66 պետական փորձաքննական դրական եզրակացությունը, հաշվի առնելով «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2017 թվականի հուլիսի 10-ի թիվ Ֆ-198/17 գրությունը, «ՏԱԹԵՎԻԿ-3» ՍՊ ընկերության 2017 թվականի հունիսի 12-ի թիվ 2 գրությունը և Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1.«ՏԱԹԵՎԻԿ-3» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) մեկ տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թիվ ԵՀԹ-29/248 թույլտվությունը՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կաքավաձորի տուֆերի հանքավայրի Ներքին Բազմաբերդի տեղամասը՝ 1.X=4460651 Y=8416539, 2.X=4460679 Y=8416530, 3.X=4460700 Y=8416514, 4.X=4460730 Y=8416489, 5.X=4460792 Y=8416469, 6.X=4460830 Y=8416460, 7.X=4460870 Y=8416453, 8.X=4460878 Y=8416635, 9.X=4460785 Y=8416637, 10.X=4460786 Y= 8416671, 11.X=4460762 Y=8416682, 12.X=4460737 Y= 8416701, 13.X= 4460694 Y= 8416712, 14.X = 4460677 Y=8416709, 15.X=4460672 Y=8416698 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված 4,0 հա տարածքով՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ կատարելու համար:

2. Ընդերքի գործակալության պետին՝

1) պատրաստել սույն հրամանի 1-ին կետում նշված Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կաքավաձորի տուֆերի հանքավայրի Ներքին Բազմաբերդի տեղամասի՝ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության ընդերքօգտագործման թիվ Պ-248 պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր), ծանուցել դիմումատուին և հրավիրել վերջինիս 10-օրյա ժամկետում պայմանագիրն իր կողմից վավերացնելու մասին.

2) ընկերության կողմից պայմանագիրը վավերացնելուց հետո 10-օրվա ընթացքում, ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքի վճարման անդորրագրի ներկայացումից անմիջապես հետո, ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը.

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրն իր կողմից չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած.

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումը երկրաբանական ուսումնասիրությունների իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին - ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթը ստացումից եռօրյա ժամկետում:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ